Արձանագրություն 3

«ԳՀԾՁԲ-ՍՀՆԾ-ՁԻԱՀ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով
Սոցիալական հոլովակների նկարահանման ծառայությունների
ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի
գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 22 հունվարի 2020թ.
Անցկացման ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ստանիսլավ Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արշակ Ասմարյան Ժանետա Պետրոսյան Մարինե Ասրյան Արշակ Պապոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Ստանիսլավ Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (21.01.2020թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցը՝ Վահե Ղազարյան Ա/Ձ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	**Գնահատման չափանիշը**	**Գնահատման արդյունքը**
		Վահե Ղազարյան Ա/Ձ
1.	որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, Վահե Ղազարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

N 1, N 2 և N 3 չափաբաժինների համար Վահե Ղազարյան Ա/Ձ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Ստանիսլավ Հակոբյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր

մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը **(23.01.20թ. մինչև 27.01.20թ.)**:

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(նախագահ՝ Ստանիսլավ Հակոբյան)

3.1 «ԳՀԾՁԲ-ՍՀՆԾ-ՁԻԱՀ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով սոցիալական հոլովակների նկարահանման ծառայությունների ձեռքբերման գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ս.Հակոբյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Ա.Ասմարյան	_____ (ստորագրություն)
	Ժ.Պետրոսյան	_____ (ստորագրություն)
	Մ.Ասրյան	_____ (ստորագրություն)
	Ա.Պապոյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	_____ (ստորագրություն)